ՆՈՐ-ԴԱՐ

№ 179 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի, 8 Հոկտեմբերի, 1903 Չորեքշաբթի, 8 Հոկտեմբերի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 179

Տարին 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հասով 5 կ.։ Բաժանորդ կն գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի չոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներ։ Յայտարարութիւնների գնաին 2 կ., րեկլամների համարը կրկն ապա

Հոկտեմբերի 8-ին, ցերեկուայ ժամը 12-ին, Վերայի հայոց ղերեզմանատանը կկատարուի հոդեհանդիստ և մահարձանների օրհնութիւն

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ ՄԱԿԱՐԵԱՆՆԵՐԻ

Դերեզմանների վրայ, որի մասին և յայտարարւում է բա-
(275) րեկամներին և ծանօթներին 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ինչական դասը հայոց մէջ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Բագուից, Բերդուսից, Օլթուց։
Ո՞ւր են հայ ընթերցողները։
Թղթակցութիւններ.—Բալախանի։
Քաղաքական.—Անգլիայի միջամտութիւնը։ Ճապոնացին Քորէայում։
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 7-ն հոկտեմբերի, 1903 թ.

ԳԻՒՂԱԿԱՆ ԴԱՍԸ ՀԱՑՈՑ ՄԷՋ

Առիթները միշտ անպակաս են եղել խօսելու, կրկնելու, մատնացոյց անելու մեր գիւղական դասի խորին տգիտութիւնը իւր ուղեկայ ղեկավարների վերաբերմամբ։

Այդտեղ հետևանքներն ու վնասները արդէն դուրս են բարոյականի շրջանից և նրանք ծանրանում են ուղղակի գիւղացու տնտեսական կացութեան վրայ, և չափազանց վատ կերպով ազդում նրա ամբողջ գործունէութեան։

Ոչ միայն հայ շինականը ծանօթութիւն անգամ չունի գիւղատնտեսութեան շատ ճիւղերի մասին, հապա նոյն իսկ այն գործերը, որոնք դարերի ընթացքում նրա զբաղմունքի առարկաներն են եղել, ինչպէս օրինակ, երկրագործութիւնը, խաչնարածութիւնը, գինեգործութիւնը, գտնւում են իրենց նախնական վիճակի մէջ։ Ինչպէս գիւղական տնտեսութեան զանազան ճիւղերի տարածումը, նմանապէս և արդէն եղածների զարգացումը ու կատարելագործութիւնը կարող են իրականանալ այն ժամանակ միայն, երբ կրնդարձակուի գիւղացու մտաւոր հորիզոնը և նրան կտրուի գիւղատնտեսութեան անհրաժեշտ եղած դիտելիքները։

Այդ նպատակով, բացի արդէն դոյութիւն ունեցող միջոցներից, հայ գիւղատնտեսութեան գործին ահագին ծառայութիւն կարող է մատուցանել գործին հմուտ ձեռքով հրատարակուող «գիւղատնտեսական մի հանդէս», որի պակասը միշտ զգալի է եղել մեր գրականութեան մէջ։

Թէ ինչ դեր կարող է խաղալ մի այդպիսի մասնագիտական պարբերական հրատարակութիւն և ինչուան է կայանալու նրա նշանակութիւնը, — այդ մասին մենք կխօսենք մի ուրիշ առիթով։

ՔՐՈՆԻԿՈՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ Մուխրանեան պարոնը բանեցնելու համար նշանակուած ամրդի ժամանակ ամենամեծ գինը՝ 8,500 ր. առաջարկեց Եգանեան։ Դրանից յետոյ պարոմի նախկին կապալառու Բաւդադեան քաղաքային վարչութեանը մի յայտարարութիւն է տուել, որով խընդրում է, որ պարոմի կապալն իրեն տրուի 11,000 ռուբլով։ Ի նկատի ունենալով, որ Բաւդադեանի վրայ նախկին կապալից ապառիկ է մնում մօտ 8 հազար րուբլի, քաղաքային վարչութիւնը որոշեց պարոմի կապալը տալ Եգանեանին և այդ գործը Բաւդադեանի յայտարարութեան հետ միասին առաջարկել քաղաքային խորհրդի քննութեան։

— Թիֆլիսի քաղաքագլուխը հոկտեմբերի 6-ին նահանգապետին մի յայտարարութիւն տուեց, որով նրա միջնորդութիւնը և աջակցութիւնն է խնդրում, որ երկրագործութեան և պետական կալուածների վարչութեան իրաւասութեան տակ գտնուած Մուշտայիդի այգին յանձնուի քաղաքին, ի նկատի ունենալով, որ այդ այգին ներկայանում է Թիֆլիսի բնակչութեան ամենասիրած զբօսավայրը և պահում է անխնամ վիճակի մէջ. այգին քաղաքին յանձնուելուց յետոյ կզբօսի ըստ ամենայնի բարեկարգ վիճակի մէջ։

— Հոկտեմբերի 15-ից անդրկովկասեան երկաթուղիների վրայ մտցւում է մարդատար գնացքների ձմերային ժամակարգութիւն։

—Ինչպէս հաղորդում է անդրկովկասեան երկաթուղիների պաշտօնական թերթը, այդ երկաթուղիների կառավարիչը թոյլ է տուել գրամական պարգևներ տալու Բաթումի դեպոյի և Բաթում, Միխայլովո, Թիֆլիս և Բագու կայարանների 210 ծառայողների, որոնք յիշեալ կայարաններում այս տարուայ յուլիսին եղած գործադուլների ժամանակ հաւատարիմ էին մնացել իրենց ծառայական պարտականութեանը և, չնայելով գործադուլ անողների սպառնալիքներին, ծառայութեան էին եկել և գրանով նպաստել էին աշխատանքները չընդհատուելուն և գնացքների երթևեկութիւնը կանոնաւորապէս չարունակուելուն։ Պարգևների չափը տատանւում է 3 և 50 րուբլու միջև։ Բացի դրանից, միևնոյն տրժանիքների համար 25 տնձերի յայտնուած է երկաթուղիների կառավարչի շնորհակալութիւնը, իսկ 5 անձերի աւելի բարձր պաշտօն է տրուած։

— 1903 թուի սկզբին Թիֆլիսի աղնուականների դպրոցում ուսանում էր 664 աշակերտ, իսկ այժմ ուսանում են 720 հոգի, որոնք ըստ ազգութեան բաժանւում են հետևեալ կերպով. 705 վրացի, 8 ռուս, 3 հայ, 2 լեհ և 1 յոյն։

— Թիֆլիսի հայոց դրամատիքական ընկերութեան խումբն իր երկրորդ ներկայացման համար ընտրել էր պ. Շիրվանզադէի «Նաֆինէ» պիէսը։ Այս անգամ գերակատարներն աւելի ուշադրութեամբ էին վերաբերուել իրենց դերերին, որով ներկայացումն ընդհանուր առմամբ բաւական աջող անցաւ։ Աջող էր մանաւանդ պ. Աբէլեանի խաղը Նազինէի ամուսնու դերում. նրա ամեն մի շարժումի և արտասանած իւրաքանչիւր խօսքի մէջ երևում էր դերի լուրջ ուսումնասիրութիւն։ Օր. Խիթարեանի այժերը թոյլ են Նազինէի դրամատիքական դերն ըստ հարկին տպաւորիչ կատարելու համար. նա կարող է շատ օգտակար դերասանուհի լինել աւելի թեթև դերերի համար։ Օրիորդը պսակ ստացաւ։ Մնացած դերակատարներից մասնաւորապէս կարող ենք անել պ. պ. Պետրոսեանի և Աւետեանի բնորոշ խաղը։ Նոյն գիշերը ներկայացուած «Պաշտօնա խումվալ է» վոդեվիլի մէջ պ. Աւետեանը բուսական ծիծաղեցրեց հասարակութեանը, թէև մի քիչ համը տարաւ իւր կլօունութեան մտածուած չափազանցութիւններով։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲԱԴՈՒԻՑ.—Հոկտեմբերի 2-ին, գիշերը, ժամը 11-ին Սաբունչում հրդեհ ծագեց «Սօուչաստնիկի» նաւթահանքում չատրուան խփելու ժամանակ. այրուեց 3 վիշկայ։ Գրակն տնցաւ հարևան հանքերը, որտեղ այրուեցին «Բագուի նաւթային առևտրական ընկերութեան» 2 վիշկան, Փիթոյեանի 1 վիշկան, Ջէր-Յակովլեանի 4 վիշկան, «Մայգուլի» 2 վիշկան։ Հրդեհի ժամանակ «Բագուի նաւթային առևտրական ընկերութեան» մի վիշկան վայր ընկաւ և տակը մնացին Փիլ ոյեանի ծառայողներից չորս հոգի, որոնցից 3-ը իսկոյն մեռան, իսկ մէկը դեռ կենդանի է։ Մեռնողներն են՝ Կոստանդ Թունեանց Զանգեզուրի գաւառից (խնձրկեցի), Մուրադ Յարութիւնեանց Երևան քաղաքից և Առաքել Դաւթեանց Զանգեզուրի գաւառի Գեալուր գիւղացի։ Չորրորդը, որ դեռ ևս կենդանի է, նոյնպէս Զանգեզուրի գաւառից է (գնում առաջորդի) Համբարձում Արզումանեանց ազգանունով։

—

ԲԵՐԴՈՒՄ գիւղից (Կարսի չրջան).—Կիրակի, սեպտեմբերի 28-ին, ս. պատարագից յետոյ՝ գիւղի ս. Յովհաննէս եկեղեցում, խուռն ազօթողների ներկայութեամբ մեր գիւղի ծխատէր Արսէն քահ. Բլրեան կատարեց վեհափառ կաթողիկոսի տասներորդ տարեդարձի եկեղեցական հանդէսը։ Այնուհետև հայր Բլրեան քարոզեց ս. Էջմիածնի 1600 ամեակի առթիւ։

—Գիւղացիք աւարտեցին կալ ու կուռը. եղանակը փոխուեց. լեռներում ձիւն է գալիս։

—

ՕԼԹՈՒՑ. —Սեպտեմբերի 28-ին, կիրակի, մեծաշուք հանդիսով օծուեց նորակառոյց հայ-կաթոլիկաց եկեղեցին։ Օծման հանդիսին հրաւիրուած էր և չրջանիս գործակալ աէր Վարդան հայրը։

Ո՞ՒՐ ԵՆ ՀԱՑ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

(Նամակ Բագուից)

Թուրքերը մի առած ունեն, որ վերաբերում է կեղծ դրութեան մէջ գտնուող մարդուն։ Երբ որ մէկի գործերը վատ են, իսկ օտարները հակառակն են կարծում՝ թուրքերը այսպիսի մարդու բերանից ասում են թէ ներսը իրան է այրում, իսկ արտաքինը ուրիշներին։ Ներքին ծանր հանգամանքներից ինքը մարդը տանջւում է, իսկ նրա արտաքինը ուրիշների նախանձն ու տեսլութիւնն է շարժում։ Ճիշտ վերոյիշեալ թուրքի դրութեան մէջ ենք գտնւում այսօր մենք։ Մինչդեռ մեզ պակասում է կատարելապէս ինքնագիտակցութիւնը, մինչդեռ մենք ունենք մի ինտելլիգենցիա, որ հազարաւոր ռուբլիներ զոհաբերութեան, ինչի և սպեկուլացիայի վրայ է ծախսում և խնայում է տարեկան մի 30—40 րուբլի հայերէն բոլոր թերթերը ստանալու, մենք ունենք մի հոգևորականութիւն և ոչ պակաս թերութիւններով, ապականուած բուրժուազիա՝ մենք սակայն ամեն օր ենթարկւում ենք օտար մամուլի յարձակումներին և մեզ մեղադրում են վերագրելով մեզ հէնց այնպիսի արժանիքներ, որ մենք չունենք։ Ահա թէ ինչումն է ցաւը։ Մեզ վրայ բարդում են այնպիսի մեղադրանքներ, որ քաղաքակրթ ազգերի մէջ արժանաւորութիւն չպիտի համարուէր, բայց մենք չունենք այդ յատկութիւնները, որովհետև ասիական ենք։ Գնել այդ մեղադրանքները արդարացնելու համար թող մեր ինտելլիգենցիան մի փոքր սթափուի իր յանցաւոր անտարբերութիւնից և լուրջ կերպով մտածէ օգտաւէտ լինելու այն հասարակութեան, որին նա պարտական է իր կրթութեամբ, դիրքով, անցեալով և ներկայով։ Մեր բոլոր լրագիրների և ամսագիրների բաժանորդների ընդհանուր թիւը, որ հինգ հազարի չի հասնում՝ ամենալաւ ապացոյցն է մեր իսկական պատկերի։ Բայց երբոր գրականութիւնը համեմատում ես մեղադրանքների հետ, ակամայ ասում ես. ոհ, երանի սրա կէսը, կիսի կէսը գէթ երևար մեր աչքում։

Ընթերցող

Բագու, 25-ին սեպտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԼԱԽԱՆԻ, 2 հոկտեմբերի. — Բալախանու հարաւ-արևելեան կողմում գտնուող Ռոմանեան լեռը, որը ունի մօտաւորապէս մէկ ու կէս վերստ երկարութիւն, կէս վերստ լայնութիւն և 24 ֆունտ խորութիւն, գոյացել է տարիների ընթացքում նաւթային հորերից արտահանուած ջրերից։

Վաղուց էր այդ լճի տեղը նաւթային ճանաչուած։ Նրա հիւսիսային ափում մօտ 15 տարի է, որ մի քանի ֆիրմաներ հարուստ հանքեր ունին, սակայն չգիտենք ինչ պատճառով այդ տեղը մնում էր առանց չահագործելու։ Վերջապէս երկու տարի առաջ այդ տեղը գրաւեց Մոսկուայի մի քանի խոշոր գործարանատէրերի լուրջ ուշադրութիւնը, որոնք Բագուական հարուստ Պ. Օ. Ղուկասեանի հետ մի ընկերութիւն կազմեցին («Մոսկուա-Կովկասեան ընկերութիւն») 5.000,000 ռուբ. դրամագլխով. ընկերութիւնը պայման կապեց պետական կալուածների մինիստերութեան հետ, որպէսզի իւր հաշուով լճի ջուրը բաց թողնի Գասպեան ծովը և այդ հողի մի որոշ մասում վիշկաներ գնի, իսկ միւս մասը մնայ կալուածների մինիստերութեան տրամադրութեան տակ։

Ընկերութիւնը, համաձայնութիւն ստանալով, երկու տարի է ինչ սկսել էր իւր գործունէութիւնը, որը թէև սկզբներում կրիայի քայլերով էր առաջ գնում, բայց յետոյ չնորհիւ ինժեներ Բրայլովսկու, գործը լաւ ընթացք ստացաւ։ Պ. Բրայլովսկին լճից մինչև Գասպեան ծովը ջրանցք է չինել մօտաւորապէս 13 վերստ երկարութեամբ, որից 2½ վերստը գետի տակովն է տարած։ Այդ բանի համար ծախսուած է 800,000 րուբլի։

Սեպտեմբերի 28-ին ջրանցքն արդէն պատրաստ էր, և որոշուած էր այդ օրը ջուրը բաց թողնել։ Լճի ափը զարդարուած էին գոյնզգոյն դրօշակներով։ Ծամը մէկին սկսուից հանդէսը, որին ներկայ էին Բագուի նահանգապետ պ. Օդինցովը. զանազան պաշտօնական անձինք և բաւականին թաւով զինուորներ ու կազակներ։ Չնայած որ այդ օրը սաստիկ քամի էր փչում, այնուամենայնիւ հանդէսը գրաւել էր հետաքրքրուողների ահագին բազմութիւն թէ քաղաքից և թէ Բալախանուց։ Կային նաև նաւթային մի քանի ֆիրմաների կառավարիչները։ Երբ որ ջրանցքը օրհնեցին, պ. նահանգապետը առաջինը բարձրացրեց տախտակը, որը բաժանում էր ջրանցքը լճից, ջուրը իսկոյն սկսեց ուժեղ հոսանքով թափուել ջրանցքը։ Այսպիսով վերջացաւ հանդէսը, որից յետոյ հիւրերին առաջնորդեցին դէպի լճի միւս կողմում գըտնուող ընկերութեան չէնքը, որտեղ նախապատրաստուած էր պատրաստուած։

Ջուրը կամաց-կամաց սկսում է պակասել, բայց յայտնի չէ, թէ քանի ամսում կը վերջանայ բոլորը. մասնագէտները հաշուել են, որ մինչև վեց ամիս կը տևի։

Ընկերութիւնն արդէն լճի մի ափում մի քանի վիշկաներ ունի կանգնեցրած, բայց հէնց որ բոլոր ջուրը վերջանայ, այնուհետև կը կանգեցնէ և ուրիշներին իրենց յատկացրած հողաբաժնում, իսկ մնացած մասը, որը հարիւր դեսեատինից աւելի է, անշուշտ պետական կալուածների մինիստերութիւնը կը տայ ցանկացողներին աճուրդով։

Ս. Սերգէյան

ՀԱԳԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱՑԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Ճապոնական մի թերթի հաղորդածի համաձայն, Անգլիան մանջուրական հարցի առիթով Ռուսիային ու Ճապոնիային հետևեալ առաջարկներն է արել.

1) Ռուսիան պարտաւոր է Մանջուրիան վերադարձնել Չինաստանին։

2) Մանջուրիայի գլխաւոր քաղաքները պէտք է բաց լինեն բոլոր տէրութիւնների առևտրի առաջ։

3) Ռուսիան պարտաւոր է Մանջուրիայից յետ քաշել իւր բոլոր զօրքերին, ի բաց առեալ երկաթուղային գծի պահպանութեան յատկացուածը։

4) Ռուսիան պէտք է պարտաւորուի յետ կենալ նպաստ գետի երկու եզերքների անտառները կտորելու իրաւունքից և ոչնչացնի Իօնամպոյի վերաբերմամբ ունեցած իւր պայմանագիրը։

Նոյն լրագրները հաղորդում են, որ

անգլիական դեսպան կլոդ Մակդոնալդին յաջողուել է ճապոնական կառավարութեան համաձայնութիւնը ստանալ վերեւ յիշուած պայմանների մասին և ներկայումս բանակցութիւնները շարունակւում են միայն ռուսական ու անգլիական կառավարութիւնների մէջ։

—

ՃԱՊՈՆԱՑԻՆ ՔՈՐԷԱՑՈՒՄ

Անգլիական «Pail. Mail» թերթի մէջ անգլիացի ժօրժ Լինչը, նկարագրելով Սէուլ-Փուզան երկաթուղային գիծը, ի միջի այլոց, ասում է.

«Նախատեսելով ապագան, ճապոնացիները վաղօրօք արդէն գնել են այդ գծի երկայնութեամբ տարածուած ամենալաւ տեղերը։ Նկարագրելով Փուզանում գժուար է գտնել տան և կամ խանութի համար քիչ շատ շնորհքով մի կտոր տեղ, որ ճապոնացիները արդէն գրաւած չլինեն։ Քորէական կառավարութիւնը զանազան ժամանակներ շատ հրովարտակներ է հրատարակել, որոնց մէջ աւելորդ մանցիներին արգելւում է Քորէայում հողեր ձեռք բերել, սակայն, դրանցից ոչ մէկը չի կարողացել ճապոնացիների վրայ ազդեցութիւն ունենալ։ Սէուլի անշարժ կայքի համարեա մի երրորդական մասը, Շեմուլպոյի կէսը և միւս երեք մօտակայ քաղաքների բաւական կարևոր մասը գտնւում է ճապոնացիների ձեռքը։

—

«Universal Gazette» ում տպուած է Ռուսիայի վերջին պահանջները, որոնք բաղկացած են ութը յօդուածից։ Այդ յօդուածները իրենց մէջ նոր բան չեն պարունակում, բացի ութերորդից, և դրա մէջ ասուած է, թէ ամբողջ Մանջուրիան պէտք է գտնուի Ռուսիայի կոնտրոլի տակ և Ծայրագոյն-Արևելքին վերաբերուած բոլոր բանակցութիւնները պէտք է կատարուեն այդ երկրների վրայ նշանակուած ռուսական փոխարքայի հետ։ Իսկ ութերորդ յօդուածի մէջ ասուած է, որ, բացի Ռուսիայից, ոչ մի ուրիշ պետութեան չպէտք է առանձնաշնորհումներ տրուի և ոչ մի կառավարութիւն իրաւունք չունի Ռուսիայի ու Չինաստանի գործերին միջամտելու. այդ բանին պէտք է աշխատի ինքը՝ Չինաստանն ևս։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

Հոկտեմբերի 6-ից

ՖԵՐՐՈԼ.—Անգլիական երկու զրահանաւ ընդհարուեցին իրար նաւախաղի ժամանակ և միւս նաւերի օգնութեամբ բերուեցին այստեղի նաւահանգիստը։

ՀՌՈՄ.—Պապը Մերքի-դէլ-Վալին նը շահակից ենթ-քարտուղար։

Կ. ՊՈԼԻՍ.—Մինիստրների խորհուրդը վճռել է յատկացնել 50,000 լիրա հրոպական չորս վիլայէթներում վերաշինելու այրուած գիւղերը, եկեղեցիները և դպրոցները։

ՎԵՆՆԱ.—Բելգիայի թագաւորը մեկնեց Պարիզ։

ԳԵԿԻՆ.—Անգլիական դիսպանատան մէջ պայթում առաջացնելու փորձը պարզապէս գողութիւն է եղել։ Դողերը յափշտակել են պահեստից թնդանօթի ռումբեր և ուրիշ առարկաներ, և որովհետև այդ բանները հեռու տանելը չափազանց դժուար էր, այդ պատճառով գողայուծի մի մասը պայթեցրել են և յետոյ փախել։

Կ. ՊՈԼԻՍ.—Ռուսաց և աւստրիական դեսպանները ստացել են ռեֆորմների ծրագիրը Մակեդոնիայի համար։ Ամենակարևոր մասը կազմում են այն միջոցները, որ ձեռք պիտի առնեն պետութիւնները վերահսկելու համար ռեֆորմների իրագործմանը։ Ծրագիրը կյանքին հրկու դեսպանները միասին հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ։ Ծրագիրը խիստ մանրամասն է։ Գոնարոլի համար ձեր առնուելիք միջոցների էութիւնն առայժմ գաղտնի է պահւում։

Հոկտեմբերի 7 ից

ՍՈՖԻԱ.—Էկզ-Զագրայից Սոֆիա վերադարձած հակառակ կուսակցութեան պարագլուխները՝ Դեչևը և Դանևը, պատմածների համեմատ, Դանևը շատ քիչ է մնացած եղել, որ սրսպանուի, եթէ չաշխատէր թագնուել ընկերոջ տան, որ ենթադրւում էր, թէ թագնուած է Դանևը, ամբոխը քարուքանդ է արել։ Հոկտեմբերի 5-ին տեղի ունեցած նոր կռուի ժամանակ վիրաւորուած է 30 հոգի։ հակառակորդ կուսակցութեան ներկայացուցիչների ժողովում տեղի ունեցած գէպքը բուռն քննադատութեան առարկայ էր դարձել։ Կուսակցութիւնը ուշադրութեան առնելով իրեն եղած տերրորի սպառնալիքները, որոշել է, որ կուսակցութեան կողմնակիցները իրենց պարտքը մինչև վերջը կատարեն։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԼԵՒԿԻ. պ. Ա. Եար-Նին։ Սաացել ենք ձեզանից ապահովուած մի նամակ. հասցէն գրուած է Նիկոլայ Տէր-Յովհաննիսեանց, հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Մեր խմբագրատան մէջ այդ անունազգանունով մարդ չկայ։ Նամակը կմնայ մեր խմբագրատանը, մինչև որ մեզ չէք գրել թէ իսկապէս ով է յիշեալ պարոնը և որտեղ պէտք է նրան հասցնել։ Այս առիթով պէտք է ասենք, որ Թերթիս խմբագրութեան պարտաւորութիւնը չի կարող լինել մանաւանդ, խմբագրութեանս չվերաբերեալ նամակները պոստից ստանալ և տեղը հասցնել։ Սովորաբար մենք չատ կողմնակի նամակներ ենք ստանում և չատ անգամ ոչ նամակ ուղարկողին ենք ճանաչում և ոչ էլ նրան, ով որ պէտք է ստանայ, ինչպէս որ այս դէպքում։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՓԼԻՍԻ ՍՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Ռուսական օպերա
Անտրեպրիզ Նորին Մեծութեան
ՕՐԼՈՍ Ն. Ն. ՏԻԳՆԵՐԻ
Շաբաթ օգոստոսի 8-ին,
կը ներկայացուի
ՅԱՐՍԿԱՑԱ ՆԵՒԵՍՏԱ
Օպերա 4 գործ. Թարգ. երաժ. Ռիմակի-Կորսակովի։
Մասնակցում են՝ տ. տ. Արցիշաևա. Մելնիկովա, Մելիւկ-Ռոզնաովսկայա, Լելինա, Սկօրուպսկայա, Տրոյնիկովա, պ. պ. Ռայսկի, Դարսկի, Ամիրջան, Սանդուրսկի, Գրինեօզ, Դաւրիլով։
Գլխ. ռեժիս. Բոգոլիւբով։
Կապելմայստեր՝ Պոզէն
Սկիզբը երեկ. ժամը 8-ին
ԱՋՐ.—Վաղը, հինգշաբթի, հոկտեմբերի 9-ին, կներկայացուի «Հուգենոտներ», օպ. 4 գործ. երաժ. Մայերբերի։ Պատրաստւում է առաջին անգամ Թիֆլիսում ներկայացնելու «Ֆրանչիսկա դա-Ռիմինի», պ. 4 գործ. երաժ. Նապրաւնիկի։ Տոմսակները վաճառւում են։
(252) 1—1

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ընտանիքում վարձու է տրուում մի չքեղ սենեակ, որը նայում է փողոցին, ունի առանձին մուտք, լաւ կահաւորուած է, կարելի է և տանից կահաւորանքի։ Տրուում է ճաշ։ Կունսուլսկի փողոց, տ. Եղիազարեանի № 30, հարցնել լաքէյ Խաչատուրին։
5—3

Հոյս տեսաւ Մ. ՉՄՇԿԵԱՆ

1904 թ.

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՔԸ

Կիլիկիոյ նորօծեալ Կաթողիկոսի և հանգուցեալ Ընբէպ. Մելքիսեդեկ Մուրադեանի պատկերներով։
Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Չմշկեան
(269) 12—3

Հոյս տեսաւ առանձին գրքույկով
ՉԻՐՎԱՆ ՉԱԴԷ
ԵԻԳԻՆԷ
դրամա 3 գործ.
Գինն է ճանապարհածախսով 50 կոպ.
Դիմել Գուտաեներբրգ գրավաճառանոցին «Գրագետ» խանութին Թիֆ. Ծաղկոփանի տակ) նաև հեղինակին—Тифлисъ Ширванзаде (249) 5—5

ՀՈՑՍ ՏԵՍԱՒ
ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՔԱՐՈՂՉԱԿԱՆ ԹՈՒԹՈՒՆԵՔՆԵՐ
Բ. Դրքոյկը։
Գինն է 40 կոպ.։ Դիմել հեղինակին
Դանձակ։ 5—7

ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Հինգշաբթի, հոկտեմբերի 9-ին
Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը
մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՑԻ
կը ներկայացնէ
Առաջին անգամ Սարդուի յայտնի կր.
ՏՕՍԿԱ
5 գր. և 6 պատկ. Թարգմ. Ադ. Թարխանեանցի
Մասնակցում են. տ. տ. Ազնիւ, Խիքարեան, Նօնիկեան, Սաֆեանիկ-Չմշկեան, Սիրանոյշ, և պ. պ. Աբելեան, Ադեան, Ալիխանեան, Աղայեան, Անդրանիկ, Աւետեան, Ցարութիւնեան, Մամիկոնեան, Պետրոսեան, Տէր-Դաւթեան, Ռշտունի, և ուրիշ.
Սկիզբը ճիշտ ժամը 8-ին է.
Ռեժիսսեօր. Տ. ՍԻՐԱՆՈՑ.
(274) 2—1

Լոյս է տեսել և ծախւում է
„ԲԱՆԲԵՐ“
գրականութեան և արուեստի Ա. գիրքը։ Երկրորդը լոյս կ'տեսնի նոյեմբերի վերջերին։
Բաժանորդագինն է դուրս (4 ր.) արտասահման 12 ֆրանկ. Առանձին հատորներով ծախւում է 2 ր.50 կ.։
Բաժանորդագրութիւն ընդունւում է ևս մաս մաս՝ գրուելիս 2 ր. 50 կ. մնացածը երկրորդ գրքի լոյս տեսնելիս։
Դիմել Եմբագրութեանը՝ С. Петербургъ, Невск. пр. 55, և կամ հայ գրավաճառներին։
(271) 0—1.

ԱՐԱՔՍԵԱՆԻ ՀԱՒԱՔԱՐԻ ՆՈՐ ԹԱՏՐՈՆ
(Կոստանդինովսկայա փողոց, տուն Վարամեանի)
ՀԱՆԳՈՒՑԱՒՈՐ ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ 1903 Թ.
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
ղեկավարութեամբ
Պ. Ա. ԱՐԱՔՄԵԱՆԻ
կներկայացնէ
Առաջին անգամ մասնակցութեամբ
ԴԵՐ. Ց. ԱԲԷԼԵԱՆԻ
ՈՁԲԱԳՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔ
Դրամա 4 գր. հեղ. Բովետաի, թարգմ. Ա.
Կորըտգօի դերը կը կատարէ Ց. ԱԲԵԼԵԱՆԸ
Մասնակցում են տ. տ. Զաբէլ, Արաքսեան, Բէգիջանեան, պ. պ, Արևելեան Վրոյը, Խուդանեան և ուրիշ.
Սկիզբն է շիշտ 8½ ժամին երեկոյեան
(277) 1—1 Ղեկավար. Պ. Ա. ԱՐԱՔՄԵԱՆ

ԲՐՈԿԿԱՐ եւ ԸՆԿ.
ՆՈՐՈՒԹԻՒՆ! Օծանելիք
„ДУШИСТЫЙ ТЮЛЬПАНЬ“
Հաճելի և երկարատև հոտ
(M) 148206 6—2 Ц. К. О.

„ԳՐԱՄՈՖՈՆ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, Գալաւ. պրոսպէկտ, տուն Արիւճաևի № 7։ Հասցէն հեռագրի համար Թիֆլիս Գրամոֆոնի ընկերութիւն. հեռախօս № 69.
Մեծ բանակութեամբ բազմատեսակ ամենակատարելագործուած գրամոֆոններ։
Ահագին բանակութեամբ պլաստինկեր յայտնի և երեւելի երգիչների ռուս, հայ, վրացի, թիւրք, պարսիկ, լեհացի, ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, գերմանացի և այլն։
Պլաստինների ընտրութեան ժամանակ, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գործարանի «հրեշտակը գրելիս» կնիքի վրայ, առանց այդ բանին պլաստինները անպայման կեղծ են։
Ընկերութեան պահեստին հետ կայ յատուկ գործարան, որտեղ, հարկ պահանջած դէպքում ուղղում են գրամոֆոնները։
Գրամոֆոնների կանոնաւոր բանելու մասին, երեք տարուայ համար երաշխաւորութեան թուղթ է տրւում։
Ապարատների փաթաթելու և կապելու ծախքը մագազինի հաշուին է։
Ապարատների առաքումը մինչև բոլոր երկաթուղիների կայարանները (նոյնպէս և ամառուայ ամիսներին՝ նաւահանգիստները) ընկերութիւնը իւր հաշուով է անում։
Պոստով առաքման ծախքի կէսը «Գրամոֆոնի» ընկերութիւնը իւր վրայ է առնում։
Կիրակի օրերը խանութը փակ է իսկ միւս օրերը առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 9-ը բաց։
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԱՏԱԼՈԳՆԵՐ
Մեծ քանակով առնողներին ուղարկւում է ըստ պահանջման նոր պրէյսկուրանտներ։ (224) 30—25

ԿՐԵՄ ԱՄԻԿՈՍ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑ ԿԱԶՈՒԻ ԵՒ ԵՐԵՍԻ ՀԱՄԱՐ
CREME AMYKOUS
Դործ է ածւում յաջողութեամբ կաշուի և երեսի բոլոր թեթև հիւանդութիւնների ժամանակ, ինչպիսիք են խալերը և բշտիկները և այլն Առանձնապէս առաջարկւում է պ. պ. դերասաններին և դերասանուհիներին գրիմները վերցնելուց յետոյ իբրև մի միջոց, որ աշխուժացնում է տաքութիւնը և գրիմներից առաջացած միւս հետևանքները։ Բանկայի գինը 1 ր. 25 կ. 2 բանկան ուղարկւում է 3 բուրլով ուղղակի հնարողների կողմից։
Торговый домъ «Парфюмерная Лабораторія» 1 Голлендеръ. С. Петербургъ Разъѣжая ул.№13.(М.)24265 8—7

Дозв. Цензурою 7-го Октября 1903г. Վերէիչն և Կամենմախեր Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. №852